

խմբագրել-բաժանել է յաջորդող՝ Մարքի, Ելիմացիքի, Պարսքի եւ Արիքի գլուխների մէջ, որ համապատասխանում էին պտղոմէոսեան աշխարհներին¹): Բացի այդ՝ նկատուած է, որ արաբների հզօրացումն արծարծուած է նաեւ «Աշխարհացոյց»-ի համառօտ բնագրում, ուստի՝ պարզ է, որ վերջինս կազմուել է 620 կամ 630-ական թթ.: Ժամանակագրական այս սահմանը թոյլ է տալիս մտածել, որ համառօտութեան հեղինակը կարող էր լինել երիտասարդ եւ դեռ վարդապետական գիտելիքներ ձեռք չբերած Անանիա Շիրակացին (ծնուել էր 610-ական թթ. սկզբներին), որին հետագայ ձեռագրական ականդոյթը վերագրում է համառօտ «Աշխարհացոյց»-ի մի քանի միաւորների հեղինակութեամբ: Այս պահին խուսափելով փաստարկութեան հանգամանալից քննարկումից՝ հակիրճ նշենք, որ աղբիւրագէտի հայեացքով ամենեւին ընկալելի է Շիրակացուն բուն «Աշխարհացոյց»-ի հեղինակ համարող մասնագիտական վարկածի շարունակական արծարծումը², քանի որ, ինչպէս նկատել է Ս. Երեմեանը, դրա բացառման համար լիովին բաւարար է 618 թ. հիմնադրուած կամ օծուած Ս. Հռիփսիմէի տաճարի փոխարէն սրբուհու մատուռի յիշատակման փաստը:

Մեր նշած ժամանակագրական տարբերակով (630-ական թթ.) կարող է ընկալելի դառնալ ե՛ւ հետագայ ձեռագիր ժողովածոներում Շիրակացու երկերի հետ համառօտ «Աշխարհացոյց»-ի հարեւանութեան փաստը, ե՛ւ նրա այդ երկերում առկայ տիեզերագիտական որոշ պատկերացումների շե-

ղումը «Աշխարհացոյց»-ի հեղինակի պատկերացումներից: Թւում է՝ թէ հասուն տարիքում վարդապետը լիովին կարող էր որեւէ կերպ անդրադարձած չլինել պատանի տարիների իր «տեխնիկական» գործերից մէկին, բայց միաժամանակ՝ դա հազիւ թէ խանգարէր նրա գիտուն սաներին՝ այդ գործը եւս մեքենայաբար ներառելու իրենց ուսուցչի նորակազմ ժողովածոներում:

Այսպիսով, է դարի «Աշխարհացոյց»-ը կարող է ներկայանալ ստորեւ տրուած՝ նոր կէտադրմամբ եւ տողատմամբ գիտաքննական բնագրով, որի վերաբերեալ որոշ գնահատականներ հրապարակել ենք վերջին տարիների գիտաժողովներում ընթերցած գեկուցումներում եւ հրատարակած աշխատանքներում³: Նոր բնագիրը կազմուած է միակ գրչագրով պահպանուած մատենագրական միաւորի նախօրինակի վերականգնման սկզբունքներով (Վենետիկի թիւ 1245 գրչագրի ընթերցումները նշանակում ենք՝ V, իսկ [1p] – [38w] ձեւով՝ նրա էջերը): Բոլոր այն դէպքերում, երբ հնարաւոր է յատուկ փաստարկել համառօտ տարբերակի ընթերցումների՝ խմբագրման արդիւնք, իսկ յայտնի աղբիւրներից շեղումները՝ հէնց երկի հեղինակի վրիպման հետեւանք չլինելը, նախապատուութիւնը տուել ենք V-ի ընթերցումներին: Ընդ որում վերջինիս՝ ցաւալիօրէն առատ թերիներից ու պակասներից իւրաքանչիւրի համար փորձել ենք մատնանշել նախ եւ առաջ գրչական հնարաւոր վրիպման հաւանականութիւնն ու պատճառները⁴ («տե՛ս եւ ... եւ», «հմնտ. Գ → Գ» կամ նմանատիպ այլ ձեւերով): Տողատակում ներկայացրել ենք եղած բոլոր միւս մօտեցումները եւ նշել չլուծուած հարցերը, որը թոյլ է տալիս շահագրգիռ ընթերցողին՝ ինքն-

1 Առաւել մանրամասն տե՛ս J. Marquart, *Ērānšahr nach der Geographie des Ps. Mosēs Xorenaci: Mit historisch-kritischem Kommentar und historischen und topographischen Excursen*, Berlin, 1901; *The Geography of Ananias of Širak (AŠXARHAC'OYC')*. The Long and the Short Recensions. Introduction, Translation and Commentary by R. H. Hews, Wiesbaden, 1992, էջ 226-241:

2 Վերջին անգամ տե՛ս Ռ. Հիւրնի հիմնարար անգլերէն հրատարակութեան մէջ. *The Geography of Ananias of Širak (AŠXARHAC'OYC')*. The Long and the Short Recensions..., Wiesbaden, 1992:

3 Տե՛ս, օր.՝ Ա. Յակոբեան, *Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ռուսիք)*, Վիեննա-Եր., 2009:

4 Դրանց մասին մանրամասն տե՛ս Ն. Բիւզանդացի, *Քննութիւն Հայոց հնագրութեան*, Հրատ. պատրաստեց Մ. Միւնստեան, Բեռլ, 1986: